Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11298

№ 87

գուրիւն «Սբ. Լիսիցեան եւ Ընկ.» Ընկերութեան

ՊՐՕՖ. Վ. ՋՕՄԲԱՐՏ

ԻՆՉՈ՞Ւ ԱՅԺՄ ԱՄԵՆ ՄԱՐԴ ՀԵՏԱՔՐՔՐԻՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՎԱՐՁԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

(5)



3(02)
Ա-77 Ա-ց
300
1263-20
1003
11705
25 SEP 2006
Հ.ՍՍՌ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Армения, Мясникян
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏ. ԸՆԿԵՐ. ,,ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.''

Սկսել է մի շարք թարգմանական գեղարուեստական մեծ գրուածքների հրատարակութիւն

«ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

ընդհանուր վերնագրի տակ

Թարգմանութեանը մասնակցելու են առաջնարգ ոյժեր.

ԱՌԱՋԻՆ ՎԵՑՀԱՏՈՐԵԱԿԻ

մէջ մտնում են հետեւեալ աշխատութիւններ,

1. Էրկման-Շատրիան—«ՄԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», *վէպ 18-րդ դարի վերջի ֆրանսիական կեանքից։*
2. Վ. Հոյնիչ—«ԲՈՌ», *վէպ երեսնական թւականների իտալական կեանքից։*
3. Վ. Ֆոն Պոլենց—«ԲԻՒՏՆԵՐ ԳԻՒՂԱՑԻՆ», *վէպ ժամանակակից գերմանական կեանքից։*
4. Էմիլ Զոլա—«ԺԵՐՄԻՆԱԼ կամ ԱԾԽԱՀԱՏՆԵՔ», *վէպ ժամանակակից ֆրանսիական կեանքից։*
5. Հաուպտման—«ԴՐԱՄԱՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ» (Կառապան Հենշել, Զուլհակներ, Կրամպոն բարեկամը և այլն).
6. Կ. Է. Ֆրանցոզ.—«ՏԱՐԱՍ ԲԱՐԱԲՈԼԱ»,—*վէպ երեսնական թւականների պոդոլեան ռուսինների կեանքից։*

Ամբողջ հրատարակութիւնը կունենայ 2200—2400 մեծադիր երես և կըսկսի 1905 հոկտ. ու կը վերջանայ 1906 թ. մայիսին։

ՊՐՕՖ. Վ. ՋՕՄԲԱՐԹ

ԻՆՉՈ՞Ի ԱՅԺՄ ԱՄԵՆ ՄԱՐԴ ՀԵՏԱՔՐՔՐԻՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Թարգմանեց գերմաներէնից

Ս. ԹԱՌԱՅԵԱՆ

Հրատարակութիւն
«ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.»
Ընկերութեան

Յատուկ գումարով ԴԱՒԻԹ ՇԱՀԱՄԵԱՆԻ յիշատակին

ԹԻՖԼԻՍ

Էլեքտրաշարժ տպարան ,,ՀԵՐՄԷՍ'' ընկերութեան

1905 (111)

13.04.2013

11298

Дозволено Цензурою 12 Іюля 1905 г. г. Тифлисъ.

ՆՈՒՅՆ ՇՈՒՎԱՆԼՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՌԵՄ ՅԱՐ.
ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ.
ՀՈՒՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՀԱՄՈՑ ԱՋԻ.
ԳՈՒՐԵՂԱՆ ... ՏԱՐԵԴԱՐՁԻՆ
1919 Թ.

1.

Ներկայ հասարակական կեանքին ուշադրութիւն դարձնողը, իսկոյն կը նկատէ, որ քաղաքատնտեսական ու ընկերավարչական խնդիրները մեր ժամանակում շաղկապուած են կենսական միւս երևոյթների հետ, ուստի այժմեան քաղաքակիրթ երկրներում համարեա չկայ մի մարդ, որը գէթ ժամանակ առ ժամանակ կարիք չը զգայ՝ ինքն իրան հաշիւ տալու տնտեսական հանգամանքների ու ընկերավարչական (սոցիալական) քաղաքականութեան նպատակների մասին։

Ժամանակակից հասարակութեան մէջ կան բազմատեսակ մասնագէտներ, վաճառականներ, արհեստաւորներ և այլն։ Տեսնենք թէ սրանցից իւրաքանչիւրը որքան կարիք ունի հետաքրքրուելու՝ քաղաքատնտեսական և ընկերավարչական խնդիրներով։

Նախ և առաջ ուշադրութիւն դարձնենք ուսումնաւարտ երիտասարդութեան վրա։ Համալսարանական կարգի հաստատութեան առաջին տեղը բռնում է

Ուսուցչաբանը։

Հէնց որ նա ուսումը աւարտում է ու հոգևորականի պաշտօն է ստանձնում, իսկոյն նկատում

է, որ իւր հովանաւորութեան յանձնուած համայնքը գտնուում է ինչոր անսովոր իրարանցման մէջ։ Երիտասարդ հոգևորականը կամայ-ակամայ պիտի ինքն իրան հարց տայ, թէ որտեղից է ծագում այդ շարժումը, ինչ բանից է ժողովուրդը անբաւական, ինչ կարիքներ ու հոգսեր ունի նա... և ահա ներկայանում է նրա աչքերի առաջ մտաւական ամբողջ կեանքը իւր մռայլ պատկերներով... Գուցէ այդ համայնքը տուժում է օտարների մրցութեան պատճառով, կամ թէ պանդխտութեան ախտն է թուլացնում համայնքի ոյժերը, կամ թէ չարչիներն են ծծում նրա կենսական ամբողջ հիւթը։ Հարկաւոր է միջոցներ ձեռք առնել, անհրաժեշտ է համայնական վարկ կազմակերպել։ Բայց մեր հոգևորականը կարող է մի ուրիշ տեսակ համայնքի մէջ ընկած լինել, ուր կեանքի հիմքը արդիւնագործութիւնն է՝ արհեստանոցը կամ գործարանը։ Եւ ահա համայնքի անդամները մտածում են՝ աշխատանքի պայմանները բարեփոխելու, օրաժամերը պակասացնելու մասին, բանւորական յանձնաժողովներ են կազմում, գործադուլ են կազմակերպում և այլն։ Ի՞նչպէս պիտի վարէ հոգևորականը իւր պաշտօնը այդպիսի մի հասարակութեան մէջ, եթէ ինքը ընաւ զաղափար չունի այն բոլորի մասին, ինչով զբաղւած է ծխականների սիրտն ու միտքը։ Եթէ երիտասարդ պաշտօնեան նոյնիսկ բոլորովին ցանկութիւն չունի գործնական մասնակցութիւն

ունենալու, օրինակ՝ նպաստելով վարկի կազմակերպութեան կամ բանւորական համախմբումներին, այնուամենայնիւ նա միայն այն դէպքում ներքին-հոգեկան կապ կունենայ իւր ծխականների հետ, երբ գոնէ հասկանում է, թէ իսկապէս ինչն է անտեսապէս ճնշում ժողովրդին, այսինքն ըմբռնում է այն ընդհանուր հասարակական կապերը, որոնցով բացատրւում է ամեն մի առանձին համայնքի դրութիւնը։ Միայն այն ժամանակ կը կարողանայ նա մասնաւորապէս ըմբռնել իւր համայնքի հոգսերն ու նեղութիւնները։

Իրաւաբանը։

Մի ժամանակ իրաւագիտական ուսումը երկու ճիւղի էր բաժանւում՝ զուտ իրաւաբանական ու պետական-վարչական. վերջինս կարևոր էին համարում միմիայն կառավարչական պաշտօնեաների համար։ Կարծում էին, թէ միայն պետական պաշտօնեաներին է հարկաւոր՝ ծանօթ լինել ընդհանրապէս ընկերավարչական և մասնաւորապէս քաղաքատնտեսական գիտութիւնների հետ։ Իսկ բուն իրաւաբանների համար քաղաքատնտեսութիւնը մի աւելորդ բան էին համարում։ Մեր ժամանակ, ընդհակառակը, օրէցօր ընդհանանրում է այն համոզմունքը, որ իրաքանչիւր իրաւաբան պիտի անպատճառ ծանօթ լինի քաղաքատնտեսական գիտութեան հետ, եթէ ոչ նա ոչինչ իրա-

կան արդիւնք չէ կարող բերել իւր պաշտօնի մէջ։ Յաղուց արդէն մարդիկ գիտակցել են, որ արդար դատաստան անելու համար, դատաւորը անպայման պիտի ի նկատի ունենայ այն շրջապատը, որի մէջ գտնւում է յանցաւորը։ Իսկ այդ դէպքում «շրջապատ» ասելով, ամեն բանից առաջ պէտք է հասկանալ յանցաւորի և նրան շրջապատողների տնտեսական վիճակը։ Միայն այն դատաւորը կարող է արդարացի վճիռ կայացնել յանցաւորի մասին, որը պարզ գաղափար ունի վերջինիս տնտեսական շրջապատի մասին։ Ցիշեալ սկզբունքը մի առանձին կարևորութիւն է ստանում մանաւանդ այն դէպքում, երբ գործած յանցանքը ուղղակի տնտեսական անզուսպ մրցութեան մի արդիւնք է, կամ թէ անխուսափելի կերպով կապւած է դասակարգային ընդհարումների հետ։ Ի՞նչ պիտի հասկանայ այս դէպքում դատաւորը, կամ դատախազը, կամ փաստաբանը, եթէ քաղաքատնտեսական զարգացում չունի։ Շատ է պատահում, որ այս ու այն անմեղ մարդուն միանգամայն անարդար կերպով դատապարտում են ոչ միայն հասարակ դատաւորները, այլ նոյնիսկ դատական բարձրագոյն ատեանները։ Այդ անարդար վճիռները առաջ են գալիս այն հանգամանքից, որ յիշեալ շրջաններում շատ անգամ չեն ըմբռնում «յանցանքների» ծագման իսկական պատճառները։ Բայց և քաղաքացիական դատերի իրաւաբանը, նոյնպէս իւրաքանչիւր քայլափո-

խում հանդիպում է այնպիսի հարցերի, որոնց պատասխանը նա երբէք չի գտնիլ, եթէ տեղեկութիւն չունի տնտեսական յարաբերութիւնների մասին։ Բաւական է յիշել այստեղ՝ բօրսային գործերից առաջացած վէճերը, վաճառականական առօրեայ անհամաձայնութիւնները, կապիտական ամբողջ օրէնսդրութիւնը, գրաւ դնելու գործը և այլն։

Բժիշկները։

Արդէն սկսել են խօսել մի ինչոր «հասարակական բժշկականութեան» մասին, և մինչև անգամ ոմանք ձեռնարկ էլ են կազմել այդ մասնաճիւղի համար։ Սա մի լաւ ապացոյց է, որ բժշկական կոչումը նոյնպէս սերտ կապ ունի հասարակական միւս հանգամանքների, մանաւանդ տնտեսական երևոյթների հետ։ Իրաւաբանութեան մասին խօսելով ասացինք, որ այս ու այն յանցանքը շատ անգամ շրջապատող հանգամանքների անխուսափելի արդիւնքն է։ Նոյն սկզբունքը ուղիղ է և բժշկական ասպարիզում այս ու այն հիւանդութեան վերաբերմամբ։ Իւրաքանչիւր հիւանդութիւն մի պատահական դիպուածք չէ, այլ անխուսափելի կերպով կախւած է մնդամութիւնից, զբաղմունքից, բնակարանից և սրանց նման հանգամանքներից։ Բժիշկները շատ լաւ գիտեն, որ չէ կարելի միատեսակ միջոցներ առաջարկել, կամ միևնոյն եղանակով առողջացնել

մէկ ընկճուած, ժողովրդի ամենաչքաւոր խաւերին պատկանող, աշխատաւորին, և մէկ; բարձր դասակարգին պատկանող, բուրժուային, որը անսահման հարստութիւն ունի։ Իսկական բժիշկը գիտէ, որ ինքը պիտի նախևառաջ ըմբռնէ հիւանդի տնտեսական դրութիւնը, նրա ապրուստի պայմանները, որպէս զի համապատասխան խորհուրդներ տայ նրան։

Բացի այդ, կան մի շարք ուրիշ հանգամանքներ, որոնք առիթ են տալիս բժշկին՝ լուրջ ուշադրութիւն դարձնելու տնտեսական երևոյթների վրա։ Մեր խօսքը վերաբերում է այն հիմնարկութիւններին, որոնց նպատակն է հոլանաւորել հիւանդ կամ ծերացած մարդկանց։ Այդ հիմնարկութիւնների թւին են պատկանում օրինակ, հիւանդներին նպաստող գանձատները, փոխադարձ պաշտպանութեան միութիւնները (հիւանդութեան դէպքում) և այլն։ Այդ բոլոր հիմնարկութիւնների մէջ բժիշկները կամ ուղղակի պաշտօն են ունենում, կամ անդամակցում են, կամ թէ վերջապէս այս ու այն կերպով մասնակցութիւն են ունենում։

Հէնց բժշկի անձնական դիրքն էլ կապ ունի տնտեսական հանգամանքների հետ։ Մեր բուժիշկը անշուշտ նկատում է, որ իւր պաշտօնակիցների շրջանում նոյնպէս «տնտեսական» մրցութիւն է տեղի ունենում։ Նախապէս բաւականաչափ գումար ունեցող բժիշկները կամաց

կամաց տիրապետում են բժշկական ամբողջ շուկային։ Իսկ գումարազուրկ բժիշկները, չը կարողանալով մրցութեան դիմանալ, միմեանց ետևից անցնում են մտաւոր (նեղ մտքով՝ զուտ բժշկական) պրոլետարների շարքը։

Ինչ վերաբերում է համալսարանական միւս ուսանող երիտասարդներին, նրանք էլ իրանց մասնագիտութեան համեմատ պիտի, գոնէ զուտ գիտական նպատակով, ծանօթանան քաղաքատնտեսական խնդիրների հետ։ Բայց դրանց մէջ կան դեռ մի շարք այլ և այլ մասնագէտներ, որոնք այսպէս թէ այնպէս շփւելու են տնտեսական կեանքի հետ, օրինակ քիմիկոսները, եթէ կամենան պաշտօն ստանալ որևէ գործարանում։

Բայց ոչ միայն ուսանողները, այլև բոլոր մասնաւոր մարդիկ պիտի հաշիւ տան իրանց՝ քաղաքատնտեսական խնդիրների մասին։

Գործնական մարդը,

եթէ կամենում է իւր գործերը առաջ տանել, լինի նա գիւղատնտես, թէ արհեստաւոր, թէ վաճառական, պիտի անպատճառ տեղեկութիւն ունենայ շուկայի յարաբերութիւնների մասին, պիտի գոնէ գիտենայ, թէ ինչ կապ կայ իւր մասնաճիւղի և ուրիշ բազմատեսակ գործերի մէջ։ Հէնց նոյն իսկ իւր զբաղմունքին վերաբերող մասնագիտական լրագիրը ընթերցանելու

և հասկանալու համար նա պիտի փոքր ինչ ասելի լայն զարգացողութիւն ունենայ։ Իսկ եթէ նա գործ ունի վարձկան բանուորների հետ, արդէն պարտաւորւած պիտի լինի՝ ուսումնասիրել ընդհանուր տնտեսական ու հասարակական պայմանները։ Համարեա իւրաքանչիւր ամիս հրատարակւում է ընկերավարչական մի նոր օրէնք, որը այս ու այն փոփոխութեան է ենթարկում բանուորներ բանացնելու ու նրանց վարձատրելու ձևերը։ Մերթ հարցը վերաբերում է հիւանդացած բանուորի կեանքի ապահովութեան, մերթ՝ անբաղդ դէպքերի առաջն առնելու միջոցներին, մերթ՝ կանանց աշխատանքին, մերթ՝ կիրակնօրեայ հանգստութեան և այլն։ Բոլոր այդ դէպքերում գործատէրը պարտաւորւած է նախ և առաջ պարզել իւր համար նոր օրէնքի կամ կարգադրութեան իմաստը. հէնց այդ պատճառով նա պիտի ընդարձակէ իւր ընկերավարչական աշխարհահայեացքը որպէս զի կարողանայ պարզ ու որոշ կերպով հասկանալ իւրաքանչիւր առանձնակի սկզբունքը։

Եւ յետոյ այն դիրքը, որ գործատէրը պիտի բռնէ դէպի իւր բանուորները ու նրանց պահանջները, պարտաւորեցնում է նրան՝ փոքր ինչ աւելի պարզ դատողութիւն ունենալ օրւայ դէպքերի մասին, որպէս զի նա կարողանայ ուղիղ հայեցակէտ ունենալ գործակատարների կամ վարձկան բանուորների պահանջների մասին, նա

պիտի գիտենայ, թէ որտեղից են ծագում այդ պահանջները և առհասարակ դէպի ուր են ձգտում բանուորները։ Նա պիտի պարզ գաղափար ունենայ բանուորական կազմակերպութիւնների մասին, որպէս զի զգուշանայ՝ գործնական սխալ եզրակացութիւններ անելու վտանգից։ Նա պիտի հասկացողութիւն ունենայ հաշտարար ատեանների և գործարանական դատավարութիւնների մասին, որոնք քննում են բանուորների հետ ունեցած անհամաձայնութիւնները։ Նա պիտի սխալ չը հասկանայ գործատէրերի միութեան նշանակութիւնը, երբ ստիպւած է լինում միանալ նրանց հետ։

Գործակատարների և գործը կատարողների շահերի հակառակ լինելուց ծագող խնդիրներն են նոյնպէս, որոնց պատճառով

բոլոր գործակատարները

ստիպւած են ծանօթանալ սոցիալական հարցի հետ։ Նրանց սեփական կազմակերպութիւնները, սեփական իրաւունքներն ու պարտաւորութիւնները, որ ծագում են հասարակական կազմակերպութեան վերաբերող օրէնսդրութիւնից, առիթ են տալիս բոլոր գործակատարներին՝ ուսումնասիրելու իրանց մասնաւոր զբաղմունքին ու իրանց

ամբողջ դասակարգին վերաբերող հանգամանքները։

Կ ա ն ա յ f

նոյնպէս օրէցօր աւելի պատճառ են ունենում՝ հասարակական կեանքի երևոյթները ըմբռնելու։ Այն, ինչոր ընդհանրապէս «կանանց շարժում» է կոչւում, բոլորովին անհասկանալի կլինէր, եթէ ուշադրութիւն չը դարձնէինք շարժման հիմքը կազմող տնտեսական հարցի վրա։ Այն կինը, որ սկսում է լուրջ կերպով մտածել իւր սեփական դրութեան մասին, անպայման պիտի ծանօթանայ հասարակական խնդիրների հետ։ Այդ դէպքում միևնոյն է, թէ ով է այս կինը՝ մի քաղաքաբնակ տիկին, որը ներկայ ընտանեկան կազմակերպութեան մէջ չափազանց քիչ զբաղմունք է գտնում, թէ մի չքաւոր բանւորուհի, որը չափազանց շատ է լարում իւր ոյժերը։

Կարծում ենք, թէ այժմ ամենքի համար կատարելապէս պարզ է, որ բոլոր քաղաքագէտները, հրապարակախօսները և վերջապէս բոլոր լրագիր կարդացողները չեն կարող կեանք անցուցանել, առանց գաղափար ունենալու՝ տնտեսական ու սոցիալական յարաբերութիւնների մասին։ Կարելի է ասել, որ բոլորովին անհնար է՝ լուրջ կերպով հասկանալ որոշ ուղղութիւն ունեցող մի հասարակական լրագիր, առանց գաղա-

փար ունենալու՝ հարկատուութեան, առևտրական ու մաքսային օրէնքների, բանւորական շարժումների ու նմանօրինակ հանգամանքների մասին։

* * *

II.

Այժմ հարց է ծագում, թէ ինչով բացատրել, մեր ժամանակի համար ընորոշ, այն երևոյթը, որ իւրաքանչիւր քաղաքացու գլխի շուրջը, աներես ճանճերի նման վժվժում են քաղաքատնտեսական ու ընկերավարչական անթիւ խնդիրները։ Այդ հարցի պատասխանը բոլորովին պարզ կլինի, եթէ ի նկատի ունենանք հետևեալ հանգամանքները։

1. Ազգաբնակութեան արագ աճեցողութիւնը։ Տասնևիններորդ դարի ընթացքում Եւրոպայի ազգաբնակութիւնը աւելի քան կրկնապատկւել է։ Մարդիկ այժմ դժւարութեամբ են պահպանում իրանց գոյութիւնը. մրցութիւնը դժւարացել է և թունաւոր կերպարանք է ընդունել։ Իւրաքանչիւր մարդ այժմ աւելի կարիք ունի՝ իւր համար դիրք ստեղծելու, իւր համար լուսնի տակ մի անկիւն որոշելու, քան մի դար մեզանից առաջ։ Այդ նոյն բանը կարելի է ասել առանձին ազգերի մրցութեան մասին. ինչպէս առանձին անհատները մէկ հասարակութեան մէջ,

այնպէս էլ զանազան ազգերը աշխարհքի երեսին՝ միմեանց դէմ տնտեսական կռիւ են մղում։ Ուրեմն կռիւը սուր կերպարանք է ստացել կրկնակի իմաստով. ազգերը կռւում են «արօտատեղերի» պատճառով, իսկ միևնոյն «աքօտատեղում» արածող ոչխարները (նոյն երկրի որդիները) կռւում են իրար հետ՝ իւրաքանչիւր խոտաբոյսի համար։ Թէև առանձին ազգերը միշտ էլ զօռով են խլել ու պահպանել իրանց անհրաժեշտ հողաբաժինները, տասնուվեց, տասնևեօթ և տասնևութերորդ դարերը առանձնապէս աչքի են ընկնում առևտրական ու գաղթականական պատճառներից առաջ եկած սոսկալի պատերազմներով,—բայց տասնևիններորդ դարի առանձնայատկութիւնն է որ արդէն բաւականաչափ փոխուել է մրցութեան ձևը և որ այժմ յաղթանակ տանողը շատ անգամ ոչ թէ կոպիտ ոյժը կամ արիւնռուշտ զէնքն է, այլ քաղաքատնտեսական կռւի խորամանկութիւններն ու ճարպիկութիւնները. սրանով բնականօրէն՝ միջազգային մրցութեան ասպարիզում առաջնակարգ դեր խաղացողը տնտեսական ոյժն է դառնում։

Իսկ հասարակութեան ներքին կեանքում վերջին տասնամեակներում, այսինքն ներկայ սերնդի օրերումն է, որ հացի խնդիրը վերին աստիճանի տագնապալից դրութեան է հասել, այն չափով, որ չափով որ աւելացել է ազգաբնակութիւնը։ Բաւական է ինկատի առնել, թէ

ինչ մեծ կարիք են զգում նոյնիսկ զանազան լիբերալ կոչուած պարապմունքների մարդիկ, ինչպէս օրէցօր բազմանում է մտաւոր պրոլետարիատը։ Իսկ ինչ կռիւ է տեղի ունենում գործնական ասպարիզում, որպիսի՞ տենդային ագահութեամբ մարդիկ միմեանց ոտքի տակը քանդում են, միմեանց առաջը կտրում են։ Երբ մի որևէ ասպարիզում ազատ տեղ է բացւում, պէտք է տեսնել, թէ իսկոյն որքան թիկնածուներ են յայտնւում։

2. Սակայն ազգաբնակութեան խտրութիւնից առաջացած լոկ տնտեսական ճնշումը տակաւին չէ կարող բացատրել այն հանգամանքը, որ ամենքը հետաքրքրւում են քաղաքատնտեսական ու ընկերավարչական հարցերով։ Նոյն ճնշումը վաղուց գոյութիւն ունի Ասիայի բազմամարդ երկիրներում, ուր այնուամենայնիւ հասարակական գիտութիւնները ոչոքի չեն հետաքրքրում։ Կը նշանակէ, որ այստեղ մի ուրիշ գործօն էլ դեր է խաղում։

Բանն այն է, որ ոչ միայն տնտեսական կեանքը, այլև բոլոր կենսական յարաբերութիւնները արմատական փոփոխութեան են ենթարկւել։ Յայտնի է, որ այդ յեղաշրջութիւնն առաջ բերողը կապիտալիզմն է։ Մարդկային կեանքը երբէք չէր ենթարկւել նմանօրինակ զօրեղ յեղափոխութեան, այն էլ այնպիսի արագութեամբ, որպիսին տեսնւած չէ պատմական ոչ մի շրջանում։ Ինչոր կատուցւել էր հարիւրամեակների

ու հաղարամեակների ընթացքում, շատ կարճ ժամանակում աւերակ դարձաւ, ինչպէս մի ժայռ, որ առաջ է եկել ջրի խաղաղ ազդեցութեան տակ անսահման դարերի ընթացքում, քարուքանդ է լինում ստորերկրեայ մի հարուածից մի բոպէում։ Ուղիղ այդպէս վարուեց կապիտալիսմը նախկին սերունդների ստեղծած՝ նիւթական հիմնարկութիւնների հետ։

Նախկին դասակարգերը տապալուած են, եթէ արդէն անհետացած չեն։ Ազնուականութիւնը կորցրել է իւր ոտների տակի հողը, ինչպէս և քաղաքային ստորին դասակարգը՝ արհեստաւորները և մանրավաճառները։ Սրանց ամենքին փոխարինել է այն դասակարգը, որը կապիտալիսմի ծաղկած դրութեան ներկայացուցիչն է, այդպէս կոչուած՝ բուրժուազիան։ Սակայն վերջինս չէ կարողանում իրան այնպէս ապահով ու հանգիստ զգալ, որպէս դարերի ընթացքում իրանց զգում էին այն դասակարգերը, որոնց այժմ կապիտալիսմը ասպարիզից դուրս է վռնդել։ Ո՛չ, նա չէ կարողանում ոչ մի բոպէ իւր յաղթանակը ուրախ վայելել։ Որովհետև նրա ետևից քարշ է գալիս մի հզօր սաւեր՝ մթնացնելով երկիրը։ Ստացուածքից կատարելապէս զուրկ մնացած պրոլետարիատը վէճ է սկսում՝ հաղիւ ոյժ ու նշանակութիւն ձեռք բերած բուրժուազիայի դէմ։ Եւ այդպիսով ծաղում է այն հսկայական խնդիրը, թէ ինչպէս անել, որ բանուորական սարսափելի

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
Մեսրոպ Մեսրոպեան
ԱՍՅՍ ԱՆՀԱՆ
1003
11/203

բանակները նոյնպէս անդամակից լինեն քաղաքակրթութեան հասայնքներին, առանց որ քարտաշանի անհանը քակրթութիւնը տուժէ, առանց որ նա զրկուէ հազարամեակների ընթացքում ձեռք բերած գանձերից։

Նախկին ընտանեկան կազմութիւնը, որ հին քաղաքակրթութեան հիմքն էր կազմում, լուծուում է։ Գիւղական նահապետական ընտանիքը քայքայուում է, բայց և քաղաքացոց ընտանիքն էլ, որ մի ժամանակ տնտեսութեան ասպարիզում կարևոր դեր էր խաղում, կորցրել է իւր նշանակութիւնը։ Այլևս ոչինչ չէ արդիւնաբերում նա, մինչդեռ առաջ ընտանիքի բազմաթիւ անդամները հաց էին թխում, օղի էին քաշում, սապոն էին եփում, միս էին ծորթում, կտաւատ էին ցանում, ժանում էին, հիւսում ու կտաւ էին գործում։ Այդ պատճառով կնոջ դերը այժմ հիմնովին փոխուել է, թէ տնտեսական կեանքի շրջանում և թէ առհասարակ հասարակութեան մէջ։ Նա այլևս ամբողջ օրը չէ զբաղուում, ձեռք չէ բերում իւր ապրուստը սեփական աշխատութեամբ՝ արհեստներ բանացնելով։ Սկզբում նա պարապ է մնում, և ինքն իրանից ձանձրանում է, մինչև որ վերջապէս զբաղմունք է գտնում տան չորս պատերից դուրս։ Եւ ահա նա սկսում է մրցել տղամարդի հետ, որին յաղթում է մրցութեան ասպարիզում, քանի որ ինքը աւելի քիչ վարձ է պահանջում. այդպիսով կինը տղամար-

դին նորից անընդունակ է դարձնում մի ընտանիք կերակրելու։

Միաժամանակ, քաղաքակիրթ երկիրների մէջ, ազգաբնակութիւնը սաստիկ տեղափոխում է։ Մեծածաւալ արդիւնագործութիւնը քարշում է ազգաբնակութիւնը դէպի գործարանական կենտրոնները, և կապիտալիստական ամբողջ սիստեմը նպաստում է այն բանին, որ մեծ քաղաքները օրէցօր զօրեղանում են, իսկ գիւղը համեմատաբար թուլանում է։ Մինչդեռ հարիւր տարի առաջ գերմանական ազգաբնակութեան միայն քառորդ մասն էր քաղաքներում բնակւում, այժմ գիւղական ազգաբնակութիւնն է փոքրամասնութիւն կազմում։ Այն էլ ինչ քաղաքներ։ Այժմեան մաքով առած մեծ քաղաքը միայն վերջին դարի ստեղծագործութիւնն է։ Աւելի քան 50 հազար բնակիչ ունեցող քաղաքներում ապրում էին Գերմանիայում, տասնեվիններորդ դարի կէսին միայն 1,200,000 մարդ, կամ թէ ամբողջ ազգաբնակութեան երեք ու կէս տոկոսը, իսկ դարի վերջում—արդէն 12 միլիոն, կամ թէ ազգաբնակութեան 22 տոկոսը։ Իսկ հարիւր հազարից աւելի բնակիչ ունեցող քաղաքներում, որոնցում 1871 թ-ին ապրում էին հազիւ 2 միլիոն հոգի, այժմ կուտակւած են աւելի քան 10 միլիոն։

Բայց տեսէք, այդ թիւերը կենսական պայմանների որպիսի յեղաշրջութիւն են արտայայտում։ Այստեղից է ծագել այն ահռելի խնդիրը, թէ ինչպէս պիտի մարդկային այդ հրսկայական կոյտերը պահպանեն իրանց գոյութիւնը, թէկուզ քաղաքակրթութեան տեսակէտից միջակ կեանք վարելով։ Այստեղից են առաջանում մեծ քաղաքի հաղորդակցութեան, քաղաքային հարկերի, սոցիալական կարգաւորութեան և այլ հանգամանքներին վերաբերող հազարաւոր հարցերը։

Հիմքից փոխել են նոյնպէս աշխատութեան բոլոր պայմանները։ Այնտեղ, ուր մի ժամանակ ազատ բնութեան գրկում իւր գութանի ետևից քայլ առ քայլ առաջ էր գնում աշխատասէր և անկախ գիւղականը, կամ թէ ուր իւր կարգնի ետևում գործում էր ինքնագլուխ վարպետը, այժմ կանգնած է հսկայական գործարանը, որը ամբողջ ցերեկը, գուցէ և ամբողջ գիշերը, բանտարկում է բազմաթիւ բանւորներին, որպէս զի կեղտոտ, դարշահոտ, օդազուրկ անկիւններում ծծէ նրանց ոսկորի վերջին ծուծը։ Իսկ միջին քաղաքի փոքրիկ խանութներին փոխարինում է մեծ քաղաքների հզօր վաճառատունը, ուր հազարաւոր գործակատարներ, խստագոյն ցուցմունքների համեմատ, իբր կոյր մեքենաներ, կատարում են իրանց անհետաքրքիր պարտաւորութիւնները։

Ազատ դաշտի միջով, ուր մի ժամանակ, զանգակները հնչեցնելով առաջ էր վազում փոստային սայլակը, այժմ թռչում է շոգեղէն նժոյգը, կամ էլեքտրական վիշապը։ Գերմանիայում,

100 տարի առաջ, ճանապարհ գնացողների թիւը մի տարւայ մէջ հազիւ մէկ միլիոնի էր հասնում, իսկ այժմ այդ թիւը հազար միլիոնից աւելի է։

Կաւելացնեմ միայն, որ ինչպէս անհատի դիրքը հասարակութեան մէջ, այնպէս էլ ազգի փոխադարձ յարաբերութիւնները հիմնովին փոխել են։ Մի շարք բոլորովին նոր, տնտեսական լայնարձակ ասպարէզներ են բացւել վերջին ժամանակներս, որոնք զանազան ազգերի համար կուսածաղիկ են դարձել և կարողացել են մի բոլորովին նոր կնիք դրոշմել համաշխարհային առևտրական յարաբերութիւնների վրա։ Ժամանակակից սերունդի կեանքի ամենակարևոր երեւոյթը գուցէ այն հանգամանքն է, որ հարուստ գաղթավայրերը մի տեսակ մօտեցել են եւրոպական շուկաներին։ Միաժամանակ դա հետեւանք է հաղորդակցութեան ճանապարհների կատարելագործութեան և այստեղից առաջացած՝ գաղթավայրերի ազգաբնակութեան բազմանալուն։ Այդ հանգամանքների ազդեցութեան տակ եւրոպական երկրագործութիւնը սաստիկ տուժել է և ստիպւած է նորանոր միջոցներ հնարելու, որպէս զի կարողանայ իւր ծանր դրութիւնից դուրս գալ։ Ուրեմն դարձեալ իրերի յեղաշրջութիւն, դարձեալ վերակազմութիւն։

Պէտք է աւելացնենք, որ կապիտալիսմը ոչ միայն հազարաւոր մանաւոր տեղերում հինը քանդել է և նրա տեղ նորը դրել, այլև հիմնա-

կան վերակազմութեան է ենթարկել տնտեսութիւնն, եւ սրա հետ միասին ամբողջ հասարակական կեանքի էական ընաւորութիւնը։

***

III.

Կեանքը մեր ժամանակ մի կատարեալ հանելուկ է դարձել։ Այն բանը, ինչոր մի ժամանակ չափ ու սահմանի մէջ, ինքն իրան առաջ էր գնում, այժմ դարձել է հոգսի ու տարակուսանքի առարկայ, հետևապէս և մտածողութեան նիւթ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այն կարիքները ու պահանջները, որոնք օրէցօր ծանրաբեռնում են մեր կեանքը, պիտի հարց ծագեցնեն մեր գլխում, թէ ախր ո՞րտեղից է այդ բոլորը առաջ գալիս, մի՞թէ այդ բոլորը անխուսափելի է, մի՞թէ ոչ մի ելք չկայ։ Այդ հարցը տալիս են իրանց նախ՝ հոգսերին մասնակցողները, և յետոյ էլ՝ հանդիսատեսները։ Եւ այդ պատճառով հետզհետէ աւելի ու աւելի հետաքրքրութիւն է զարթնում դէպի ընկերավարչական խնդիրների գործնական, հետևապէս և գիտական՝ կշռադատութիւնը։ Գիտութիւնը սկզբում առաջ է գալիս գործնական կարիքից։ Բայց շուտով մարդկային միտքը անցնում է անմիջական առիթի սահմաններից։ Մի անգամ զարթնած բանասիրութիւնը առօրեայ հոգսերից էլ աւելի է հա-

մոգում մարդկանց, թէ ընկերավարչական ուսմունքը անհրաժեշտ է մեր կեանքի համար։

Ամենակարևոր ազդեցութիւններից մինը, որ արաւ կապիտալիսմը մեր մտքի վրա, գուցէ այն է, որ նա մեզ հասկացրեց, թէ ինչ ծանրակշիռ նշանակութիւն ունի տնտեսութիւնը մեր ընդհանուր կուլտուրական կեանքի համար։ Երկու ուղղութեամբ մտաւ մեր հոգոյ մէջ այդ գիտակցութիւնը. մի կողմից մենք տեսանք տնտեսական ոյժերի նշանակութիւնը մեր ժամանակներում, և միւս կողմից համոզուեցինք, որ բոլոր քաղաքական, կուլտուրական ու մտաւոր երեւոյթները կախուած են տնտեսական հանգամանքներից։

Նոյն իսկ կոյրը պիտի վերջապէս տեսնէր այն սկզբունքի ճշմարտութիւնը, որը հեռատես սոցիալիստները տակաւին կէս դար առաջ ըմբռնել ու արտայայտել էին, որ մենք ամենքս, թէ հասարակական և թէ մասնաւոր կեանքի մէջ, ուրիշ բան չենք անում, բայց եթէ պարում ենք կապիտալիսմի փչած շուով։ Կապիտալիստական շահերը ստեղծեցին իրաւունքի և բարք ու վարքի այնպիսի ձևեր, որոնք միայն այդ շահերին են համապատասխանում։ Եւ միայն հակառակ շահերի հզօր հոսանքը կարողացաւ ազատել մարդկութիւնը սոսկալի աւերմունքից, որին նա անպատճառ կը ենթարկուէր, եթէ կապիտալիսմը անարգել առաջ ընթանար։

Բայց թէ մեր ամբողջ քաղաքակրթական կեանքը որքան էր պայմանաւորուած տնտեսական հիմունքներով, որոնցից նա բղխում էր, ամենապարզ կերպով երևաց այն ժամանակ, երբ նոյն այդ հիմունքները յանկարծակի տեղահան եղան, և նրանց հետ միաժամանակ կերպարանափոխուեցին քաղաքակրթութեան ընդհանուր ձևերը։ Եւ կը բերեմ այստեղ միայն մի քանի օրինակներ, որոնք առանձնապէս պարզ կերպով ցոյց են տալիս մտաւոր յառաջադիմութեան ու տնտեսութեան սերտ կապակցութիւնը։

Ազգաբնակութեան աճեցողութիւնը և նիւթական հարստութեան առատութիւնը, որ քաղաքակրթութեան պատանդանը սաստիկ ընդարձակեց։ Քաղաքակրթութեան ընթացքը անսովոր կերպով արագացաւ։ Միայն այժմեան եւրոպացոց նման հարուստ ազգերը կարող էին ունենալ ու պահել այն բազմաթիւ գիտնականներին, արուեստագէտներին, բանաստեղծներին ու երաժիշտներին, որոնք այժմ իրանց հոգոյ ստեղծագործութիւններով զարդարում են մեր կեանքը։ Եւ իսկապէս, գրականական ու գեղարուեստական արդիւնաբերութիւնը մեր ժամանակում արտաքոյ կարգի զարգացել է։ Պէտք է ի նկատի առնել միայն, թէ որքան գրքեր են տպագրւում այժմ։ Տասնուիններորդ դարի սկզբում, Գերմանիայում լոյս էին տեսնում իւրաքանչիւր տարի 3—4000 գիրք, իսկ այժմ աւելի

քան 25,000։ Ենթադրենք, որ հարիւր տարի առաջ իւրաքանչիւր հրատարակութիւն բաղկացած էր միջին թւով 500 օրինակից, իսկ այժմ 1000 օրինակից։ Կը ստանանք, որ այն ժամանակ տարեկան մէկ գիրք՝ տպւել է 16 մարդի համար, իսկ այժմ միայն 2 մարդին է մէկ գիրք ընկնում։ Պէտք է յիշենք, որ գրականութեան ու գեղարւեստի ասպարիզում, թւի մեծանալու հետ միասին գինը պակասում է։ Ամենալաւ ապացոյց կարող են լինել հինգ ու տասն կոպէկանոց գրքոյկների բազմաթիւ շարքերը, դասական գրողների էժանագին հրատարակութիւնները և այլն։ Ինչ վերաբերում է պատկերներին, սրանք աւելի ևս մատչելի են ամենքի համար. լուսանկարը, լուսաքանդակը, լուսատիպը նորագոյն տեխնիկայի արդիւնքն են։ Բոլոր իրական ու ֆանտաստիկական պատկերների ընտիր պատճէնները, իրանց էժան գնի շնորհիւ, կարողանում են ներս մտնել նոյնիսկ ամենաաղքատ խրճիթների դռնից։

Պարբերական մամուլը նոյնպէս նորագոյն տնտեսութեան ու տեխնիկայի հարազատ զաւակն է։ Որովհետև ինչպէս կարող էր գոյութիւն ունենալ նա, եթէ չլինէին թուղթը, արագատիպ մամուլը, երկաթուղիները, հեռագիրը ու հեռախօսը։ 1824 թւին Պրուսիայում հրատարակւում էր միայն 845 լրագիր, որոնք շատ սակաւ բաժանորդներ ունէին։ Իսկ 19-րդ դարի վերջին տարւայ ընթացքում, Գերմանիայում միայն փոստով ուղարկւած են մէկ ու կէս միլիարդ լրագրի համարներ։

Բայց մեր ներքին քաղաքակրթութեան էական գծերի վրա էլ դրոշմել են իրանց կնիքը տնտեսական հանգամանքները։ Ես իմ ընդարձակ աշխատութեան մէջ, որի վերնագիրն է «Գերմանական տնտեսութիւնը 19-րդ դարում», փորձել եմ ապացուցանել, որ մեր նորագոյն կեանքը բնորոշողը՝ բազմաքանակութեան ու բազմատեսակութեան երևոյթներն են, որոնք վերակազմւած տնտեսական կեանքի հետևանքն են։ Միւս կողմից, մեր քաղաքակրթութեան պատկերը որոշողը՝ մթերական հարստութեան օրէցօր աճող առատութիւնն է։ Մենք հարստացել ենք այս աշխարհի բարիքներով և մթերքներով, այնպէս ենք հարստացել, ինչպէս մեզանից առաջ երբէք չէ եղել։ Բայց հէնց այդ հարստութիւնն է պատճառը, որ մենք մեր կարիքների ստրուկն ենք դարձել։ Մի կողմից մենք աւելի ընդունակ ենք դառնում նիւթական բարիքներ ստեղծելու՝ մեր պահանջներին բաւարարութիւն տալու համար, իսկ միւս կողմից այդ պահանջները իրանք աւելի են աճում, քան թէ մեր ձեռք բերած միջոցները։ Շատ բան ունենալը՝ մեր սրտում ցանկութիւն է զարթեցնում աւելի շատ ունենալ։ Մի անկշտում տենչանք է առաջ գալիս մեր սրտում դէպի նիւթական, արտաքին բարիքները, և այդ տենչանքը լցնում է մեր ամբողջ հոգին։

Մենք սկսում ենք չափազանց մեծ նշանակութիւն տալ նիւթականին, և թէ աղքատը, թէ հարուստը շարունակ ձգտում են դէպի նիւթականը, շարունակ վայելչանք են որոնում։ Այդպիսով հարստութիւնը ինքն իրանից առաջ է բերում այն տրամադրութիւնը, որը մենք սովորել ենք «նիւթապաշտական» անուանել, և որը իսկապէս մեր ժամանակին յատուկ է։

Ապա այդ շարունակ աճող նիւթական հարստութիւնը, մանաւանդ այն տեղերում, ուր նա մարդկանց համախմբելով, մեծ քաղաքներ է ստեղծում, հիմնովին փոխում է մեր յարաբերութիւնը դէպի կենդանի բնութիւնը։ Եւ ահա առաջ է եկել մի արհեստական սերունդ՝ կատարելապէս զուրկ բնական բարձր ձգտումներից ու զգացմունքներից, և մի նոր քաղաքակրթական շրջան է սկսել, որը կարելի է անուանել զգայական արհեստական դարեշրջան։

Ազգաբնակութեան համախմբումը մեծ քաղաքներում և առհասարակ պանդխտութեան զարգացումը այն հետևանքն ունեցաւ, որ զանազան երկիրների, կամ նոյն երկրի զանազան մասերի, թէ ներքին և թէ արտաքին առանձնայատկութիւնները սկսեցին հետզհետէ անհետանալ։ Տեղական տարազը, ազգային երգերը, որոշ սովորութիւններն ու բարքերը, օրէցօր անհետանում են, տեղի տալով մեծ քաղաքներից ներմուծուող սովորութիւններին։ Մեծ քաղաքի հագստեղէնի

վաճառատունն է որոշում, թէ ինչ տարազի հագուստ պիտի հագնեն գաւառներում ու գիւղերում, ինչպէս և մեծ քաղաքների համերգներում որոշւում են, թէ ինչ պիտի երգեն գիւղական խրճիթներում։ Տեղի է ունեցել մտածողութեան և զգացմունքի մի ընդհանուր ձևակերպութիւն։ Նախկին պնդարմատ, բնորոշ, հայրենասէր քաղաքացուն փոխարինել է անարմատ, վերացական հանրամարդը։ Բայց թէ որքան է ազդում տնտեսական կեանքը մարդկային ընդհանուր նիստ ու կացի վրա, առանձնապէս պարզ կերպով կարող ենք տեսնել, եթէ համեմատենք նորաբոյս հասարակական դասակարգերը հին դասակարգերի հետ։ Ներկայ բուրժուազիան ու նախկին ազնվականութիւնը, ներկայ պրոլետարիատը և նախկին արհեստաւորը կամ նահապետական գիւղացին — որքան են տարբերւում իրարից այդ դասակարգերը։

Դէպի որ կողմն էլ նայելու լինենք, կուլտուրական կեանքի որ ասպարէզն էլ դիտենք, մեր հասարակութեան շրջանում տեղի ունեցող որ դէպքն էլ հետազօտենք, իսկոյն կը նկատենք որ տնտեսական պրոցեսը՝ զօրեղ ներգործութիւն է անում բոլոր կենսական երևոյթների վրա, և արմատական կերպով ձևափոխում է նրանց։ Բնական է ուրեմն, որ մեր ժամանակ ամենքը սկսել են հետաքրքրուել տնտեսական հարցերով։ Ոչ միայն այն մարդը, որը ենթարկւել է տնտեսա-

կան նորագոյն երևոյթների հաւաածներին, այլև իւրաքանչիւր մարդ, եթէ միայն նրա համար նշանակութիւն ունի մարդկային ցեղի ընդհանուր վիճակը և քաղաքակրթութեան դրութիւնը։ Որովհետև նա պիտի գիտակցէ, որ մարդկային ամեն բան, քաղաքակրթական ամբողջ կացութիւնը բղխում է տնտեսական հանգամանքներից, և ոչոք չէ կարող ըմբռնել քաղաքակրթութեան էութիւնը, նրա ներքին երևոյթները, եթէ միաժամանակ չը թափանցէ տնտեսական երևոյթների խորքը։

***

IV.

Եւ այդպէս, ճշմարտութեան ծարաւ մեր ժամանակակիցները դիմում են դէպի հասարակական գիտակցութեան աղբիւրները երկու զանազան կողմերից՝ առօրեայ կեանքի խորխորատներից և փիլիսոփայական-պատմական մտածողութեան բարձրութիւններից։ «Քաղաքային տընտեսութիւնը» պիտի բացատրութիւն տայ ոչ միայն այն խնդիրներին, որոնք ծագում են առօրեայ հանգամանքներից և էլի շուտով անհետանում են, այլ պիտի լոյս սփռէ մարդկային ցեղի գոյութիւնը պայմանաւորող յաւիտենական խընդիրների վրա։ Այդպիսով քաղաքային տնտեսու-

թիւնը դառնում է մի տեսակ կենտրոնական գիտութիւն, այսինքն դրաւում է այն դիրքը, որ մինչև մեր օրերը բնական գիտութեան էր պատկանում, իսկ աւելի առաջ դրաւում էին փիլիսոփայութիւնը կամ աստուածաբանութիւնը։ Ահա դէպի այդ կենդրոնը դիմում են ոչ միայն այն սակաւաթիւ անհատները, որոնք զբաղւում են քաղաքատնտեսութեամբ՝ գործնական-մասնագիտական պատճառներով, այլև այն ամենքը, որոնք յոյս ունեն լուծելու կեանքի հանելուկը։ Միայն այդ կերպով կարելի է հասկանալ այն հետաքրքրութիւնը դէպի հասարակական գիտութիւնները, որ սաստիկ տարածւած լինելով, մոդայի կերպարանք է ստացել։ Գուցէ մոդան էլ որոշ չափի մաս ունի այդ շարժման մէջ և անշուշտ կան մարդիկ, որոնք ուրիշ բան չեն կամենում, բայց եթէ լոկ «հանդիսատես» լինել։ Բայց լուրջ բանասէրների ահագին բազմութեան մասին չէ կարելի այդ բանը ասել։ Ով դէպք է ունեցել դիտելու, թէ ինչ աշխոյժով և եռանդով վազում են ժողովրդի որդիները դէպի քաղաքատնտեսական կուրսերը, նա չի կասկածիլ, որ ընկերաբանական գիտակցութիւն ձեռք բերելու պահանջը իսկապէս անկեղծ է և բղխում է նոր սերունդի սրտի խորքերից։ Եւ մի՞թէ հասկանալի չի լինիլ սեզ համար այդ հանգամանքը, եթէ միանգամից պատկերացնենք մեր առաջ բոլոր վերոյիշեալ հիմունքները։

Ես այսպիսով ակամայ շօշափեցի անտեսագիտական և ընկերավարչական գիտելիքներ տարածելու հարցը։ Խնդիրը ակներև երկու կողմ ունի՝ գիտենալու ցանկութիւնը և գիտենալն ինքը։ Սովորելու ցանկութիւնը այժմ համարեա ընդհանուր է, բայց ինքը գիտելիքը դեռ շատ քիչ է տարածուած։ Այստեղ մենք նպատակ չունենք քաղաքատնտեսական ուսուցման եղանակների մասին բացատրութիւն տալու։ Մի բան միայն կարելի է բացարձակ կերպով շեշտել՝ անհրաժեշտ է մշակել կրթական մի սիստեմ, որով կարելի լինի՝ ամենքի համար մատչելի դարձնել հասարակագիտական ուսումը, մանագէտներից սկսած մինչև ժողովրդի ստորին խաւերը. և այս սիստեմի մէջ տպագրական ու բանաւոր խօսքը պիտի լրացնեն կրթութեան պակասը։ Ինչ վերաբերում է մանաւորապէս բանաւոր խօսքին, այստեղ վերջին տարիներս բաւականաչափ մխիթարական երևոյթներ են նկատուած. ժողովրդականացրած դասախօսութիւնների միջոցով տարածւում են անհրաժեշտ գիտելիքները։ Մի մատչելի ձեռնարկ էլ՝ քաղաքատնտեսական ու ընկերավարչական գիտելիքներից օգտուելու համար, պիտի ներկայացնէ մեր հրատարակելիք գրքոյկների շարքը, որոնց հիմքը դնում ենք ներկայ

գրքոյկով։ Ներկայ տետրակի նպատակն է ցոյց տալ, որ ինքնակրթութեամբ զբաղուող բոլոր երիտասարդները պիտի անպայման լուրջ ուշադրութիւն դարձնեն իրանց քաղաքատնտեսական ու ընկերավարչական աշխարհահայեացքի զարգացման վրա։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Վ. Ե Ր Զ

«ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Թիֆլիսում 6 ռ., Թիֆլիսից դուրս ճանապարհածախսով 7 ռ.

Կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ—կանխավճար Թիֆլիսում—1 ռ., Թիֆլիսից դուրս 2 ռ., մնացածը ամեն հատոր ստանալիս Մէկ-Մէկ ռուբլի, վերջին 6-րդ հատորը—ձրի։

Այս տեսնելուց յետոյ վեցհատորեակը կարժենայ 9 ռ.։

Բաժանորդ գրել կարելի է Թիֆլիսում «Կենտրոնական» և «Զուտաենբերգ» գրախանութներում և «Հերմէս» տպարանում, Բագու «Сотрудникъ» գրախանութում։

Ուրիշ քաղաքներից դիմել ընկերութեանս

ՀՀ Ազգային գրադարան
NL0187444

ՀԲԱՏ. ԸՆԿԵՐ. „ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“

Ժողովրդական գրքոյկներ

1. Դեմիրչեան. Դ. *Ուխտաւորներ, Աշուղի հէքիաթը. պատմուածքներ* . . . 7 կ.
2. Վերեսաեւ Վ. *Մի անմեղ մարդու սոսկալի մահը,* թարգմ. Պ. Պոշեան. . . 6 կ.
3. Շխեանց Ս. *Մի մահ և Անտառակը. պատմուածքներ* 7 կ.
4. Էրկման-Շատրեանից *Ժամագործի յիշողութիւնները,* թարգմ. Շուշ. Խաժակեան . 8 կ.

ՀԷՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

պատկերազարդ սերիա

1. Ղազ. Աղայեանի. *Գիւղնազ-տատի հէքիաթը, Այծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան* 15 կ.
2. Ղազ. Աղայեանի. *Եղեգնուհի, Անտառի մանուկը, Ասլան-Բալա.* . . . 15 կ.

Կազմած երկուսը միասին 45 կ.

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

1. Յովհան. Թումանեանի *Սասունցի Դաւիթը* 15 կ.
2. » » *Անուշ* . . 15 »
3. » » *Լեգենդներ* . . 15 »
4. [redacted] . . *Երգեր.* . . 15 »
5. » » *Լեռան աղջիկը* . 15 »
6. Օր. Հեղինէ Մելիք-Հայկազեանի *Մի պատմա ճապոնում իմ յուշերից և տպաւորութիւններից,* 25 պատկերով . . . . 40 կ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Товарищество «Ст. Лисиціанъ и К°». (Бебутовская ул. 29) և Типографія «Гермесъ» (Мадатовская ул. 15).